# Արձանագրություն թիվ 1

2018 թվականի սեպտեմբերի 11-ին տեղի ունեցավ 4ա դասարանի ծնողական ժողովը,որին ներկա էին 26 ծնող և դասվար Հ.Հակոբյանը:Ժողովը վարում էր Հ. Հակոբյանը:

Օրակարգում

1.Ծնողխորհրդի ընտրության հարցը:

2.Տաք սննդի հարցը:

3.Ընթացիկ հարցեր:

1.Լսեցին .-Քննարկվեց ծնողական խորհրդի հարցը:Ծնողները առաջարկեցին ծնողական խորհրդի կազմի փոփոխություն կատարել:Քանի որ ծնողները առաջարկեցին ձևավորել այնպիսի ծնողական խորհուրդ ,որի անդամներն այս տարիների ընթացքում չեն եղել ծնողխորհրդի անդամներ,ըստ այդմ էլ առաջարկվեցին թեկնածուներ:Ծնողներ ի մի մասը ծանրաբեռնված լինելու պատճառով հրաժարվեց լինել ծնողխորհրդի կազմում:

Որոշեցին.-Ծնողխորհրդի կազմում ընդգրկել այն ծնողներին,ովքեր նախորդ տարիներին ընդգրկված չեն եղել այդ կազմում:Մյուս ծնողներն էլ իրենց պատրաստակամությունը հայտնեցին անհրաժեշտության դեպքում աջակցել ծնողխորհրդի անդամներին:Ծնողխորհուրդը ձևավորվեց հետևյալ կազմով.

Նախագահ՝ Ծաղիկ Հովսեփյան

Անդամներ՝ Հրանուշ Ավագյան

Գայանե Գևորգյան

Լուսինե Սարգսյան

Հռիփսիմե Ավետիսյան

2.Լսեցին.-Քննարկվեց <<Տաք սնունդ>> ծրագիրը:Ծնողներին ներկայացվեց ,թե այդ ծրագրի շրջանակներում ինչ է տրամադրվում դպրոցին:Ներկայացվեց նաև ,որ անհրաժեշտ է լինում ձեռք բերել ամանի հեղուկ,սպունգ,աղ և այլն:Դրա համար անհրաժեշտ է նաև ծնողների աջակցությունը:Ծնողներին ներկայացվեց նաև,որ ծրագրում գոյություն ունի <<Ծնողական ներդրում>> հասկացությունը,որի ժամանակ նախատեսված գումարի չափը կազմում է 100-ից 300 դրամ:

Որոշեցին.-Ծնողները քննարկեցին և որոշեցին յուրաքանչյուր ամսվա համար վճարել 300 դրամ,որպեսզի << Տաք սնունդ >> ծրագիրն իրականացվի իր հավուր պատշաճի:

-

3.Լսեցին

Ժողովի ժամանակ քննարկվեցին ընթացիկ հարցեր:Աշակերտները ստացել են բոլոր անհրաժեշտ դասագրքերը,սակայն կրթությունը լիարժեք կազմակերպելու համար անհրաժեշտ են նաև գրենական պիտույքներ՝ տետր,գրիչ,մատիտ և այլն,որով երեխաներին պարտավոր են ապահովել ծնողները:

Որոշեցին.-Ծնողները պարտավորվեցին ապահովել երեխաներին անհրաժեշտ պարագաներով և հետևեն ,որպեսզի երեխաները դպրոց հաճախեն ժամանակին և դասերին պատրաստ,չուշանան և անտեղի չբացակայեն դասերից:

Ծնողական խորհրդի նախագահ՝ /Ծ. Հովսեփյան/

Քարտուղար՝ /Ա. Գինոսյան/